ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԳՐ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

V

Երաժշտական տեսակէտից ներկայ սեզոնի նման մի ձանձրոյթ վաղուց է որ տեղի չէր ունեցել Թիֆլիսում։ Իրաւ է, Արտիստական ընկերութիւնը իւր բեմի վրայ տուց «Կարմեն» և «Եւգենիկ Օնեգին» օպերաները բաւականաչափ կրճատումներով հանդերձ, իրաւ է—Բանկային թատրոնը ներկայացնում է օպերետներ, բայց այդ ամենը այնքան հեռու է իսկական երաժշտութիւնից, որ ասելի լաւ է անգամ դրանց չը վիշելը։

Եւ ահա, յանկարծ, երաժշտական այս անլուսալի ձանձրոյթի ժամանակ յայտնւում է Թիֆլիսում մի արտակարգ խոշորութեան աստղ։ Խօսքս դեռ բոլորովին ջահել ջութակահար օրիորդ Ալեքսանդրինա Զանոլլի'ի մասին է, որը, ի դէպ ասած, ծագումով Թիֆլիսեցի է։ Մի հատ ամենաբարեում Թիֆլիսի երաժշտական աշխարհը ցնցեց և իւր եռեից դէպի թատրոն քարշեց քաղաքի բնակիչների միւս մասը—ոչ մասնագէտ երաժշտականը։ Այս հանգամանքով է բացատրւում, որ տուած առաջին կոնցերտը տեղի ունեցաւ մի սակաւաթիւ հասարակութեան առաջ, իսկ հետագայների ժամանակ—թատրոնի դահլիճը ամբողջապէս լիքն էր։ Մարդ ակամայ վիշում է այս առիթով Շահլամանի դէպքը. մինչդեռ սրա առաջին կոնցերտին թատրոնը ծայրէ ի ծայր բռնուած էր շնորհիւ լրագիրների հանած աղմուկին, յետագայ կոնցերտները պակաս լաճախորդներ ունեցան. հասարակութիւնը հիասթափւել էր իւր լսածից։

Զանոլլի'ն մի դերազանց վարպետուհի է։ Վիրտուոզ է։ Տեխնիկական դժուարութիւնները նրա համար գոյութիւն չունին։ Միակերպ հեշտութեամբ նա կատարում է Պագանինի'ի ամենադժուար կոնցերտը, Բացցինի'ի «La Ronde des lutins» («Ցնցոտի քաջքերի պարը»), Լաուբ'ի պոլոնեզը, Վիենաւսկու պոլոնեզը և տարանտելլա'ն և այլն և այլն։ Եւ այս ամենը նա կատարում է շատ պարզ, շնորհալի, թեթև և զուարթ կերպով։

Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ եթէ ժանրային այս պիեսները կատարելու լինէին ծանր, խիստ և նոյն իսկ չոր կերպով, ինչպէս որ այդ անում էր երկու թէ երեք տարի սրանից առաջ Թիֆլիս եկած Օնդրժիչեկ ջութակահարը—էֆֆեկտի մեծ մասը կը կորչէր, քանի որ ուրախ կտորը պէտք է զւարթ և ազատ կատարել. Այս տեսակէտից Ջանոլլի'ին կարելի է կատարեալ համարել. Նրա դէմքի վրա շարունակ անդրադառնում է կատարւող կտոր—պիեսը, այնպէս որ նոյն իսկ մի ոչ-երաժիշտը կարող է նրան հետևութեամբ ըմբռնել. Սորա հակառակ—աւելի լուրջ պիեսները Ջանոլլի'ին շատ էլ չեն յաջողւում. Օրինակի համար Մենդելսոնի կոնցերտը, Չայկովսկու «Sérénade mélancolique»-ը և առհասարակ այնպիսի պիեսներում, ուր վարպետութիւնը և տեխնիկան տեղ չունին, այլ ուր ուղղակի անհրաժեշտ է, այսպէս ասած, երգեցիկութիւնը (певучесть). Ահա այդ երգեցիկութիւնն է, որ դրեթէ պակասում է Ջանոլլի'ին. Այս է պատճառը որ շատերը տուն էին վերադառնում տարակուսանքի հետ միախառնւած լիութիւն չստացած մի զգացմունքով. Նա սպասում էր լսել մի խորը սիրտ յուզող ջութակի երգ, և յանկարծ նրա փոխարէն նրան առաջարկում են ամբողջ երեկոյ զանազան փայլուն և շնորհալի կտորներ. Այո, լուրջ երաժշտութիւնը Ջանոլլի'ին չի գալիս. Բայց չը մոռանանք որ նա դեռ 17 տարեկան է և որ նա այժմ գնում է կատարելագործւելու համար հռչակաւոր Իօախիմի մօտ. Շատ կարելի է որ ժամանակով նա ձեռք կը բերէ և երգանցիկ (певучій) տօնը,—այն ժամանակ նա կը հիացնէ ոչ միայն մասնագէտ ջութակահարներին, այլ և ամենքին ընդհանրապէս.

Սակայն եթէ նրան չը յաջողւի ձեռք բերել նաև երաժշտութեան լուրջ ժանրը, տեսակը,—այնու ամենայնիւ նա կը մնայ առաջնակարգ աստղ, որովհետև Պագանինի'ի, Վիենեաւսկու և ուրիշների գրւածների կատարելը տեխնիկական այն մաքրութեամբ և այն երաժշտականութեամբ որ կատարում է Ջանոլլի'ն—յատուկ տաղանդի մի գործ է, տաղանդի, որը ներկայումս մի հազւագիւտ բան է, մանաւանդ այսքան ջահել անձի համար, և նամանաւանդ որ գեղեցիկ սեռի շարքում Ջանոլլին կը բռնի առաջնակարգ տեղ իբրև ջութակահարուհի. Բայց եթէ նա ձեռք բերեց նաև տօն ջութակի երգանցութեան մէջ—այն ժամանակ անկասկած է, որ նա կը լինի առաջնակարգը աշխարհիս բոլոր ջութակահարների թւում. Սակայն այդպիսի ֆենոմենները դեռ շատ սակաւաթիւ են աշխարհիս երեսին. այդ կարգումն էին մեծ Պագանինի'ն, Վիենեաւսկին, իսկ ժամանակակիցներից, մասամբ, Իօախիմը.

*
* *

—Թիֆլիս՝ Երաժշտական դպրոցը լաւ գիւտ է արել յանձին նոր ջութակահար ուսուցչի—Սոլնիչկին'ի. Անտարակոյս, համեմատութիւն անգամ

չի կարող լինել Զանոլլի'ի հետ,—բայց թէ Զանոլլին մեզ համար ժամանակաւոր մի հիւր է, իբրև չւող թռչնիկ և գուցէ մեզ շուտով էլ թողնի առմիշտ. իսկ պ. Սոլնիշկինը մտադիր է այստեղ մնալ. Իբրև կլարնետիստ նա շատ լաւ է և շատ գերազանցում է Թիֆլիսի մի ուրիշ ջութակահարին, այն է պ. Կոլչինին. Վաղուց է ինչ որ երաժշտական դպրոցը պէտք էր մի լաւ և մշտական ջութակահար հրաւիրէր պ. պ. Գորսկու և Պետռել'ի հեռանալուց յետոյ.

*
* *

—Մօտ օրերս լոյս տեսաւ պ. Էքմալեանի նոկտիւրնը [1]. Այս փոքրիկ պիեսը բաւականին մաքուր է հրատարակուած. Բովանդակութեամբ նա հեռու չէ յիշեցնելու ամենքին քաջ ծանօթ Շոպէնին.

Ցանկանում ենք պ. Էքմալեանին աւելի մեծ ինքնուրոյնութիւն իւր յաջորդ գրուածքների մէջ. Ինչու նա չէ ձեռնարկում արևելեան եղանակների ուսումնասիրութեան. Չէ որ սա մի շատ շնորհակալ թեմա է. Ինչպիսի հմտութեամբ և տաղանդով մշակում էր դոցա հանգուցեալ Կորղանեանը...

---

[1] Ինձ թոյլ եմ տալիս պ. Էքմալեանի ուշադրութիւնը դարձնել նրա նոկտիւրնի ծածկերեսի վրա, ուր ներքևում տպուած է՝ «Chez magasin de musique Mirimanian», որ սխալ ֆրանսերէն է.